(Գործառնություն թիվ 51749)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Երեւանի ավտոբուսների ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

եւ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ

միջեւ

Սույն Վարկային համաձայնագրի նախագիծը պատրաստվել է միայն նախնական քննարկումների նպատակով:

Կարող են ավելացվել լրացուցիչ վավերապայմաններ, ներկայիս խմբագրությամբ տեքստը կարող է փոփոխության ենթարկվել եւ ենթակա է վերջնական հաստատման Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի կողմից:

Ամսաթիվ՝ 2021թ. նոյեմբերի 24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ I. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ 4
Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը 4
Բաժին 1.02. Սահմանումները 5
Բաժին 1.03. Մեկնաբանությունը 6
ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 6
Բաժին 2.01. Գումարը եւ արժույթը 6
Բաժին 2.02. Վարկի մյուս ֆինանսական պայմանները 7
Բաժին 2.03. Մասհանումները 8
ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 8
Բաժին 3.01. Ծրագրի մյուս հաստատուն վավերապայմանները 9
ՀՈԴՎԱԾ IV. ԿԱՍԵՑՈՒՄԸ, ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՈՒՄԸ, ՉԵՂԱՐԿՈՒՄԸ ... 11
Բաժին 4.01. Կասեցումը 11
Բաժին 4.02. Վաղաժամկետ մարումը 12
ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ 12
Բաժին 5.01. Ուժի մեջ մտնելու համար նախապայմանները 12
Բաժին 5.02. Առաջին մասհանման համար նախապայմանները 13
Բաժին 5.03. Իրավաբանական եզրակացությունները 13
Բաժին 5.04. Ուժի մեջ չմտնելու հիմքով դադարելը 16
ՀՈԴՎԱԾ VI. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 16
Բաժին 6.01. Ծանուցումները 16
Բաժին 6.02. Փոփոխությունները 17

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 18
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԸ 19

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ **ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ** (Բանկ) միջեւ 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ՆԱԽԱԲԱՆ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը հիմնադրվել է այնպիսի հատուկ ծրագրերին ֆինանսավորում տրամադրելու նպատակով, որոնք միտված են խրախուսելու անցումը դեպի բաց շուկայական միտվածություն ունեցող տնտեսություններ եւ խթանելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնություններն այն երկրներում, որոնք ստանձնել են հանձնառություն կիրառելու, ինչպես նաեւ կիրառում են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության եւ շուկայական տնտեսության սկզբունքները.

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Վարկառուն նախատեսում է իրականացնել Ծրագիրը, ինչպես նկարագրված է 1-ին հավելվածում, որը մշակված է օժանդակելու մոտավորապես 100 միավոր ժամանակակից, 12 մետրանոց, ցածր հատակով, սեղմված բնական գազով (**ՍԲԳ**) աշխատող ավտոբուսների ձեռքբերմանը Երեւանի քաղաքապետարանի (**Քաղաքապետարան**) համար՝ քաղաքի հասարակական տրանսպորտի ցանցը բարելավելու եւ օդի աղտոտվածությունը նվազեցնելու նպատակով.

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Ծրագիրն իրականացվելու է «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ի (**Ծրագրի իրականացման կազմակերպություն**) կողմից՝ Վարկառուի ֆինանսական աջակցությամբ.

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Վարկառուն հայցել է Բանկի աջակցությունը Ծրագիրը ֆինանսավորելու հարցում.

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը տրամադրել է 5 000 000 եվրոյի դրամաշնորհային ֆինանսավորում Արեւելյան Եվրոպայի էներգաարդյունավետության եւ շրջակա միջավայրի գործընկերության կողմից՝ աջակցելու Վարկառուին Ծրագրի իրականացման գործում, ինչը ենթակա է կարգավորման Բանկի, Վարկառուի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության միջեւ կնքված համաձայնագրով նախատեսված պայմաններով (**Դրամաշնորհային համաձայնագիր**).

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն հանգամանքը, որ Բանկը համաձայնել է, ի թիվս այլնի, վերոհիշյալի հիման վրա տրամադրել Վարկառուին վարկ՝ 20 000 000 եվրո գումարի չափով՝ համաձայն պայմանների, որոնք նախատեսված են, կամ որոնց հղում է արվում սույն Համաձայնագրում եւ նույն ամսաթվով թվագրված՝ ծրագրի համաձայնագրում՝ Ծրագրի իրականացման կազմակերպության եւ Բանկի (**Ծրագրի համաձայնագիր**) եւ ծրագրի աջակցության համաձայնագրում՝ Քաղաքապետարանի եւ Բանկի միջեւ (**Ծրագրի աջակցության համաձայնագիր**) (Ծրագրի համաձայնագիրը եւ Ծրագրի աջակցության համաձայնագիրը՝ երկուսը միասին՝ **Ծրագրի համաձայնագիր**, ինչպես սահմանված է Ստանդարտ պայմաններում).

Կողմերը, ՀԵՏԵՎԱԲԱՐ, համաձայնում են հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը

Բանկի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները սույնով ներառվում ու դառնում են կիրառելի սույն Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն համաձայնագրում (այդ դրույթներն այսուհետ՝ **Ստանդարտ պայմաններ**):

Բաժին 1.02. Սահմանումները

Անկախ այն հանգամանքից, թե սույն Համաձայնագրի որ հատվածում են օգտագործվում (ներառյալ՝ Նախաբանը եւ հավելվածները), եթե այլ բան նախատեսված չէ, կամ համատեքստով այլ բան չի պահանջվում, Նախաբանում սահմանված եզրույթներն ունեն դրանց՝ Նախաբանում տրված համապատասխան նշանակությունը, Ստանդարտ պայմաններում սահմանված եզրույթներն ունեն դրանց՝ Ստանդարտ պայմաններում տրված համապատասխան նշանակությունը, իսկ հետեւյալ եզրույթներն ունեն հետեւյալ նշանակությունները.

«Վարկառուի լիազոր ներկայացուցիչ»	նշանակում է Վարկառուի Ֆինանսների նախարարը:
«Կատարման ապահովման մասով քաղաքականություն եւ ընթացակարգեր»	նշանակում է Բանկի՝ 2017 թվականի հոկտեմբերի 4-ի՝ Կատարման ապահովման մասով քաղաքականությունն եւ ընթացակարգերը:
«Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագիր»	նշանակում է Ծրագրի համաձայնագրով սահմանված՝ Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագիր:
«Ֆինանսավորման համաձայնագրեր»	նշանակում է Վարկային համաձայնագիրը եւ Դրամաշնորհային համաձայնագիրը:
«Ֆիսկալ տարի»	նշանակում է Վարկառուի ֆիսկալ տարին, որը

	մեկնարկում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:
«Իրականացման համաձայնագիր»	նշանակում է սույն ամսաթվով կամ դրան մոտ ամսաթվով թվագրված՝ Վարկառուի, Քաղաքապետարանի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության միջեւ պատճառ գրավոր ձեւով կնքված համաձայնագիր, համաձայն որի Վարկառուն Ծրագրի իրականացման կազմակերպության համար հասանելի կդարձնի Վարկի միջոցները:
«ԾԻԳ»	նշանակում է Ծրագրի համաձայնագրի 2.03 բաժնում նշված՝ Ծրագրի իրականացման գրասենյակը:

Բաժին 1.03. Մեկնաբանությունը

Սույն համաձայնագրում համապատասխան հոդվածին, բաժնին կամ հավելվածին որեւէ հղում պետք է ընկալվի որպես հղում սույն համաձայնագրի հենց այդ հոդվածին, բաժնին կամ հավելվածին, եթե սույն համաձայնագրով այլ բան սահմանված չէ:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաժին 2.01. Գումարը եւ արժույթը

Բանկը համաձայնում է սույն Համաձայնագրով սահմանված պայմաններով

եւ կարգով Վարկառուին տրամադրել 20 000 000 եվրո գումար:

Բաժին 2.02. Վարկի մյուս ֆինանսական պայմանները

ա) Մասհանման նվազագույն գումարի չափը 2 000 000 եվրո է:

բ) Կանխավճարի նվազագույն գումարի չափը 2 000 000 եվրո է:

գ) Չեղարկման նվազագույն գումարի չափը 2 000 000 եվրո է:

դ) Տոկոսագումարի վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ը եւ հոկտեմբերի 16-ը:

ե) 1) Վարկառուն Վարկը մարում է 24 հավասարաչափ (կամ որքան հնարավոր է հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին, ընդ որում, Վարկի առաջին մարման ամսաթիվը Տոկոսագումարի վճարման ամսաթիվն է, որը համընկնում է սույն համաձայնագրի կնքման երրորդ տարին լրանալու օրվա հետ, կամ անմիջապես դրանից հետո, իսկ Վարկի վերջին մարման ամսաթիվը 2036 թվականի հոկտեմբերի 16-ն է:

2) Չհակասելով վերոհիշյալին՝ այն դեպքում, երբ i) Վարկառուն մինչեւ սույն 2.02 բաժնի «ե» կետով սահմանված՝ Վարկի առաջին մարման ամսաթիվը չի մասհանում վարկի ամբողջ գումարը, եւ ii) Բանկը հետաձգում է 2.02 բաժնի ներքոհիշյալ «զ» կետով սահմանված Վերջին հասանելիության ամսաթիվը մինչեւ այն ամսաթիվը, որը Վարկի առաջին մարման ամսաթվից ավելի ուշ ընկած ամսաթիվ է, Վարկի առաջին մարման ամսաթվին կամ դրանից հետո կատարված յուրաքանչյուր մասհանման գումար պետք է բաշխվի մարման համար հավասար մասնաբաժիններով՝ Վարկի մարման տարբեր ամսաթվերի միջեւ, որոնք ընկնում են այդ մասհանման ամսաթվից հետո

(անհրաժեշտության դեպքում Բանկի հետ ճշտելով նշված ձեւով բաշխված գումարները՝ յուրաքանչյուր դեպքում ամբողջ թվեր ստանալու համար): Բանկը ժամանակ առ ժամանակ ծանուցում է Վարկառուին այդ բաշխումների մասին:

զ) Վերջին հասանելիության ամսաթիվը սույն Համաձայնագրի կնքման երրորդ տարին լրանալու օրն է կամ ավելի ուշ ընկնող ամսաթիվ, որին Բանկը կարող է համաձայնել Վարկառուի հայտի հիման վրա եւ ծանուցել Վարկառուին:

է) Պարտավճարի չափը տարեկան 0.5% է:

ը) Վարկը ենթակա է վճարման Լողացող տոկոսադրույքով: Չհակասելով վերոհիշյալին՝ Վարկառուն կարող է ինչպես վարկի ամբողջ գումարի, այնպես էլ դրա ցանկացած մասնաբաժնի համար, որն այդ պահի դրությամբ վճարված չէ, որպես Լողացող տոկոսադրույքով տոկոսագումարի վճարման այլընտրանք ընտրել վճարման համար Ֆիքսված տոկոսադրույքը՝ վարկի այդ մասնաբաժնի համար՝ Ստանդարտ պայմանների 3.04 բաժնի «գ» կետին համապատասխան՝ պայմանով, որ սույն 2.02 բաժնի «ը» կետի նպատակով՝ Վարկի մայր գումարը Լողացող տոկոսադրույքից անցման դեպքում պակաս չի լինի, քան 2 000 000 եվրոն:

Բաժին 2.03. Մասհանումները

ա) Հասանելի գումարը ժամանակ առ ժամանակ կարող է 2-րդ հավելվածի դրույթներին համապատասխան մասհանվել՝ ֆինանսավորելու համար 1) Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ողջամիտ արժեքների առնչությամբ կատարված (կամ Բանկի համաձայնությամբ կատարվելիք) ծախսերը եւ 2) Միանվագ կոմիսիոն վճարը:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Բաժին 3.01. Ծրագրի մյուս հաստատուն վավերապայմանները

Բացի Ստանդարտ պայմանների IV-րդ եւ V-րդ հոդվածներով սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ Վարկառուն, եթե Բանկն այլ բան չի նախատեսում՝

ա) Ծրագրի իրականացման կազմակերպության համար, Իրականացման համաձայնագրի համաձայն, հասանելի է դարձնում Վարկի միջոցները.

բ) իրացնում է Իրականացման համաձայնագրով իրեն վերապահված իրավունքներն այնպես, որ պաշտպանի Վարկառուի եւ Բանկի շահերը, համապատասխանի սույն համաձայնագրի դրույթներին եւ իրականացնի այն նպատակները, որոնց համար Վարկը տրամադրվել է.

գ) չի փոխանցում Իրականացման համաձայնագրի որեւէ դրույթի իրականացումը, դրանցում փոփոխություններ չի կատարում, դրանք չեղյալ չի հայտարարում եւ չի հրաժարվում դրանցից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ բան է նախատեսում.

դ) ապահովում է, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունը կատարի Ծրագրի համաձայնագրով իր ստանձնած բոլոր պարտականությունները, ներառյալ, առանց բացառության, իր այն պարտականությունները, որոնք վերաբերում են հետեւյալին՝

1) ծրագրի իրականացման գրասենյակի գործունեության ապահովում՝ Ծրագրի համաձայնագրի 2.03 բաժնով նախատեսված կարգով.

2) ծրագրի ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնում՝ Ծրագրի համաձայնագրի 2.04 բաժնով նախատեսված կարգով.

3) բնապահպանական եւ սոցիալական խնդիրներ՝ Ծրագրի համաձայնագրի 2.05 բաժնով նախատեսված կարգով.

4) Ծրագրի իրականացմանն աջակցելու համար խորհրդատուների ներգրավում եւ նրանց ծառայությունների օգտագործում.

5) Ծրագրին վերաբերող հարցերի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում եւ ներկայացում՝ Ծրագրի համաձայնագրի 2.06 բաժնով նախատեսված կարգով.

6) գործընթացների իրականացում, փաստաթղթերի եւ հաշիվների վարում, ֆինանսական հաշվետվությունների պատրաստում, աուդիտ եւ ներկայացում Բանկ, ինչպես նաեւ Ծրագրի կամ Ծրագրի իրականացման կազմակերպության գործունեության վերաբերյալ ցանկացած այլ համապատասխան տեղեկատվության տրամադրում Բանկին՝ Ծրագրի համաձայնագրի 3.01 բաժնով նախատեսված կարգով. եւ

7) Ծրագրի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության ֆինանսական եւ գործառնական կողմերի վերաբերյալ բոլոր վավերապայմանների պահպանում՝ Ծրագրի համաձայնագրի 3.02, 3.03, 3.04 եւ 3.05 բաժիններով նախատեսված կարգով. եւ

ե) Նոր-Նորքում առկա պահեստի շուրջ սանիտարական պահպանության գոտու (ՍՊԳ) հարկադիր կիրառման և հարակից հողերի օտարման և տարաբնակեցման ազդեցությունների դեպքում նախքան որևէ այդպիսի ազդեցությունների ի հայտ գալը Բանկի համար ընդունելի պայմաններով և ձևաչափով մշակում և կիրառում է վերաբնակեցման ծրագիր, որը պետք է ստուգվի և հաստատվի Բանկի կողմից՝ Բանկի համար ընդունելի պայմաններով և ձևաչափով Ավարտի հաշվետվության միջոցով,

զ) երաշխավորում է, որ Քաղաքապետարանը Բանկի համար ընդունելի պայմաններով և դրույթներով հաստատել է, որ ունի բավարար առկա պահեստային հնարավորություններ՝ ապահովելու Ծրագրի կողմից

ֆինանսավորվող ավտոբուսային պարկի շահագործման և սպասարկման շարունակականությունը միջանկյալ ժամանակահատվածում, մինչև Նոր-Նորքի նոր դեպոյի կամ այլ պահեստային օբյեկտները շահագործման կհանձնվեն, և

է) ձեռնարկում է կամ ապահովում է բոլոր այն լրացուցիչ միջոցառումների ձեռնարկումը, որոնք անհրաժեշտ են Ծրագիրն ավարտին հասցնելու նպատակով բավարար միջոցներ ներգրավելու համար:

ՀՈԴՎԱԾ IV. ԿԱՍԵՑՈՒՄԸ, ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՈՒՄԸ, ՉԵՂԱՐԿՈՒՄԸ

Բաժին 4.01. Կասեցումը

Ստանդարտ պայմանների 7.01 բաժնի «ա» կետի (xvii) ենթակետի նպատակներով սահմանված է հետեւյալը՝

ա) Վարկառուի տարածքում քաղաքային տրանսպորտի ոլորտի նկատմամբ կիրառելի օրենսդրական եւ կարգավորող շրջանակը փոփոխությունների է ենթարկվել, կասեցվել, չեղյալ է հայտարարվել, ուժը կորցրած է ճանաչվել կամ վերացվել է այլ կերպ, քան Բանկի կողմից գրավոր հաստատված ձեւով.

բ) Ծրագրի իրականացման կազմակերպության Կանոնադրությունները փոփոխությունների են ենթարկվել, կասեցվել են, չեղյալ են հայտարարվել, ուժը կորցրած են ճանաչվել կամ վերացվել են.

գ) Ծրագրի իրականացման կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը փոխանցվել է որեւէ կողմի, որը Վարկառուն չէ. կամ

դ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը չի կատարել Ծրագրի համաձայնագրով ստանձնած իր որեւէ պարտավորություն.

ե) Քաղաքապետարանը չի կատարել Ծրագրի աջակցության

համաձայնագրով ստանձնած իր որեւէ պարտավորություն.

զ) Վարկառուն չի կատարել Դրամաշնորհային համաձայնագրով ստանձնած իր որեւէ պարտավորություն, կամ

է) որեւէ դրամաշնորհային համաձայնագրի առնչությամբ, *mutatis mutandis*, վրա է հասել Ստանդարտ պայմանների 7.01 բաժնի «ա» կետի (x) ենթակետում նկարագրված իրադարձություններից որեւէ մեկը:

Բաժին 4.02. Վաղաժամկետ մարումը

Ստանդարտ պայմանների 7.06 բաժնի «զ» կետի նպատակներով սահմանվում է հետեւյալը.

ա) 4.01 բաժնում նշված որեւէ իրադարձություն վրա է հասել եւ շարունակվել 30 օրվա ընթացքում՝ այն օրվանից, երբ դրա մասին ծանուցումը պետք է Բանկի կողմից տրված լիներ Վարկառուին:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Բաժին 5.01. Ուժի մեջ մտնելու նախապայմանները

Ստանդարտ պայմանների 9.02 բաժնի «գ» կետի նպատակներով սահմանված են հետեւյալ նախապայմանները՝ որպես սույն համաձայնագիրը եւ Ծրագրի համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ լրացուցիչ նախապայմաններ.

ա) Վարկային համաձայնագիրը կազմվել եւ ուղարկվել է Վարկառուի անունից եւ պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է բոլոր անհրաժեշտ խորհրդարանական, կառավարական եւ կորպորատիվ ընթացակարգերով,

բ) Ծրագրի համաձայնագիրը Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ կազմվել եւ ուղարկվել է եւ պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է բոլոր անհրաժեշտ խորհրդարանական, կառավարական եւ կորպորատիվ ընթացակարգերով,

գ) Ծրագրի աջակցության համաձայնագիրը Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ կազմվել եւ ուղարկվել է եւ պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է բոլոր անհրաժեշտ խորհրդարանական, կառավարական եւ կորպորատիվ ընթացակարգերով, եւ

դ) Դրամաշնորհային համաձայնագիրը Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ կազմվել եւ ուղարկվել է եւ պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է բոլոր անհրաժեշտ խորհրդարանական, կառավարական եւ կորպորատիվ ընթացակարգերով:

Բաժին 5.02. Առաջին մասհանման նախապայմանները

Որպես սույն Համաձայնագրով եւ մնացած բոլոր Ֆինանսավորման համաձայնագրերով նախատեսված առաջին մասհանման համար անհրաժեշտ լրացուցիչ նախապայմաններ սահմանված են հետեւյալ նախապայմանները.

ա) Իրականացման կազմվել եւ ուղարկվել է, եւ կատարվել են այն ուժի մեջ մտնելու կամ դրա հիման վրա մասհանումներ կատարելու՝ Ծրագրի իրականացման կազմակերպության իրավունքի բոլոր նախապայմանները՝ բացառությամբ միայն սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու,

բ) Բանկը ստացել է Բնապահպանական եւ սոցիալական գործողությունների ծրագիրը եւ հավանություն է տվել դրան:

Բաժին 5.03. Իրավաբանական եզրակացությունները

ա) Ստանդարտ պայմանների 9.03 բաժնի «ա» կետի նպատակներով խորհրդատուի եզրակացությունը կամ եզրակացությունները Վարկառուի անունից տրվում են Արդարադատության նախարարի կողմից, իսկ հետեւյալ տեղեկությունները սահմանված են որպես լրացուցիչ տեղեկություններ, որոնք պետք է ներառվեն Բանկին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ.

1) Վարկային համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է Վարկառուի կողմից եւ ուղարկվել նրա անունից եւ Վարկառուի վավեր եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտականություն է՝ ենթակա կատարման՝ դրա պայմանների համաձայն, եւ

2) Դրամաշնորհային համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է Վարկառուի կողմից եւ ուղարկվել նրա անունից եւ Վարկառուի վավեր եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտականություն է՝ ենթակա կատարման՝ դրա պայմանների համաձայն.

բ) Ստանդարտ պայմանների 9.03 բաժնի «գ» կետի նպատակներով խորհրդատուի եզրակացությունը կամ եզրակացությունները Ծրագրի իրականացման կազմակերպության անունից տրվում են նրա իրավաբանական բաժնի պետի կամ Ծրագրի իրականացման կազմակերպության նշանակած եւ Բանկի համար ընդունելի իրավախորհրդատուի կողմից, իսկ հետեւյալ տեղեկությունները սահմանված են որպես լրացուցիչ տեղեկություններ, որոնք պետք է ներառվեն Բանկին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացութ-յունների մեջ.

1) Ծրագրի համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից եւ ուղարկվել նրա անունից եւ Ծրագրի իրականացման կազմակերպության

վավեր եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտականություն է՝ ենթակա կատարման՝ դրա պայմանների համաձայն.

2) Իրականացման համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից եւ ուղարկվել նրա անունից եւ Ծրագրի իրականացման կազմակերպության վավեր եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտականություն է՝ ենթակա կատարման՝ դրա պայմանների համաձայն. եւ

3) Դրամաշնորհային համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից եւ ուղարկվել նրա անունից եւ Ծրագրի իրականացման կազմակերպության վավեր եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտականություն է՝ ենթակա կատարման՝ դրա պայմանների համաձայն.

գ) Ստանդարտ պայմանների 9.03 բաժնի «գ» կետի նպատակներով խորհրդատուի եզրակացությունը կամ եզրակացությունները Քաղաքապետարանի անունից տրվում են նրա իրավաբանական վարչության պետի կամ Քաղաքապետարանի նշանակած եւ Բանկի համար ընդունելի իրավախորհրդատուի կողմից, իսկ հետեւյալ տեղեկությունները սահմանված են որպես լրացուցիչ տեղեկություններ, որոնք պետք է ներառվեն Բանկին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ.

1) Ծրագրի աջակցության համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է Քաղաքապետարանի կողմից եւ ուղարկվել նրա անունից եւ Քաղաքապետարանի վավեր եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտականություն է՝ ենթակա կատարման՝ դրա պայմանների համաձայն. եւ

2) Իրականացման համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ

վավերացվել է Քաղաքապետարանի կողմից եւ ուղարկվել նրա անունից եւ Քաղաքապետարանի վավեր եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտականություն է՝ ենթակա կատարման՝ դրա պայմանների համաձայն:

Բաժին 5.04. Ուժի մեջ չմտնելու հիմքով դադարելը

Ստանդարտ պայմանների 9.04 բաժնի նպատակներով սահմանվում է սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից 120 օրվան հաջորդող ամսաթիվը:

ՀՈԴՎԱԾ VI. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բաժին 6.01. Ծանուցումները

ա) Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի նպատակներով սահմանվում են հետեւյալ հասցեները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որեւէ ծանուցում համարվում է ուղարկված՝ լինի դա առձեռն, փոստով, կամ pdf կամ նման ձեւաչափով՝ էլեկտրոնային փոստով.

Վարկառուի համար՝

Ֆինանսների նախարարություն,

Հայաստանի Հանրապետություն,

Երեւան 0010,

Մելիք-Ադամյան փողոց, շենք 1

Ուղղվում է՝ Միջազգային համագործակցության վարչություն

Հեռ. (սուրհանդակային +374 11 800 333

ծառայության համար)՝

Էլ. փոստ՝ icd@minfin.am

ՎԶԵԲ-ի համար՝

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ

Միացյալ Թագավորություն,

Լոնդոն EC2A 2JN,

Ուան Իքսչեյնջ Սքուեր

Ուղղվում է՝ Գործառնությունների կառավարման բաժին / Գործառնություն թիվ 51749

Հեռ.՝ +44 20 7338 6000

Էլ. փոստ՝ oad@ebrd.com

Բաժին 6.02. Փոփոխությունները

ա) Ստանդարտ պայմանների 10.03 «ա» բաժնի նպատակներով ցանկացած փոփոխություն, որը Բանկի և Վարկառուի համատեղ կարծիքով չի ավելացնում Վարկառուի պարտավորությունները, ուժի մեջ կմտնի Վարկառուի լիազոր ներկայացուցչի եւ Բանկի պատշաճորեն լրազորված ներկայացուցչի կողմից փոփոխությունն ուժի մեջ մտցնող գրավոր փաստաթղթի ստորագրման օրվանից:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ, սույն համաձայնագրի կողմերը, գործելով իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը վեց օրինակից եւ հանձնեցին այն Երեւանում՝ Հայաստանի

Հանրապետությունում, վերը նշված ամսաթվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

Անուն՝

Պաշտոն՝

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ

_____

Անուն՝

Պաշտոն՝

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուին Քաղաքապետարանի համար մոտավորապես 100 միավոր ժամանակակից, 12 մետրանոց, ցածր հատակով, ՍԲԳ աշխատող ավտոբուսների ձեռքբերումը ֆինանսավորելու հարցում՝ քաղաքի հասարակական տրանսպորտի ցանցը բարելավելու եւ օդի աղտոտումը նվազեցնելու նպատակով:

2. Ծրագիրը բաղկացած է հետեւյալ մասից, որը կարող է փոփոխության ենթարկվել Բանկի եւ Վարկառուի կողմից ժամանակ առ ժամանակ դրանց վերաբերյալ ձեռք բերված համաձայնությանը համապատասխան.

Մաս Ա. Մոտավորապես 100 միավոր ժամանակակից, 12 մետրանոց, ցածր հատակով, ՍԲԳ աշխատող ավտոբուսների գնում:

3. Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչեւ 2025 թվականի օգոստոսի 31-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն հավելվածին կցված ներդիրը սահմանում է կատեգորիաները, կատեգորիաներից յուրաքանչյուրին հատկացված վարկի գումարը եւ յուրաքանչյուր կատեգորիայի համար նախատեսված ծախսերի ֆինանսավորման տոկոսային արտահայտությունը:

2. Չնայած վերը նշված 1-ին պարբերության դրույթներին՝ ոչ մի մասհանում չպետք է կատարվի հետեւյալի համար.

ա) ծախսեր, որոնք կատարվել են մինչեւ Վարկի համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մասհանումները՝ ընդհանուր գումարով, որը չի գերազանցում Վարկի ընդհանուր գումարի 20%-ը, կարող են արվել Ծրագրի առնչությամբ՝ նախքան Վարկի համաձայնագրի ստորագրման ամսաթիվը կատարված ծախսերի հաշվին, սակայն Քաղաքապետարանի համար մոտավորապես 100 միավոր ժամանակակից, 12 մետրանոց, ցածր հատակով, ՍԲԳ աշխատող ավտոբուսների ձեռքբերման պայմանագրի ստորագրման ամսաթվից հետո:

Հավելված 2-ի ներդիր

Կատեգորիաները	Տրամադրված վարկի գումարը՝ վարկի արժույթով	Ֆինանսավորվող ծախսերի տոկոսային արտահայտությունը
(1) Ծրագրի Մաս Ա-ի հետ կապված ապրանքներ, աշխատանքներ եւ ծառայություններ	19 800 000	Պայմանագրի արժեքի 100%-ը՝ առանց հարկերի
(2) Միանվագ կոմիսիոն վճար	200 000	100%
Ընդհանուր	**20 000 000**	

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն